# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## <<ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>
## ՀՈԱԿ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, <<Սպիտակի թիվ 2 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ, Շահումյան 10, 1804,
Հեռ: (0-255) 2-04-77

«_18_» մարտի 2014 թ.

ԳԱԿ ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրերով շրջանակային
համաձայնագիր կնքած մասնակիցներին

Հարգելի Մասնակից,

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում <<Սպիտակի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները՝ համաձայն կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածի:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ ՍՁ ՆՈՒՀ -ՇՀԱՊՁԲ-14/1

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Սպիտակ, Շահումյան 10 հասցեով, 31.03.2014թ ժամը $12^{00}$-ն:

Հայտերը կբացվեն Սպիտակի 2 ՆՈՒՀ-ի վարչական շենքում 31.03.2014թ ժամը $12^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք ՍՁՆՈՒՀ-ՇՀԱՊՁԲ-14/1 պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

ՏՆՕՐԵՆ՝ Վ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ